Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ,
Ծովինար ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՄԵՏԻ ՀԻՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թովմա Արծրունին, Մովսես Խորենացու տեսանկյունից շարադրելով Երվանդ-Արտաշես հակամարտության պատմությունը, նաև այնպիսի մանրամասներ է հաղորդում, որոնք մեր պատմահոր երկում իսպառ բացակայում են: Դրանցից ուշագրավները Արտամետ քաղաքի հիմնադրման, Զարդ ամրոցի կառուցման և դրանց շրջակայքը շենացնելու մասին այն հաղորդումներն են, որոնց համար, անտարակույս, աղբյուր են ծառայել տեղական ավանդազրույցները: Ըստ Արծրունի պատմիչի, Երվանդ արքայից (մ.թ.ա. III դ. վերջեր) խույս տված մանուկ Արտաշեսը՝ ապագա Արտաշես I-ը (մ.թ.ա. 189-160թթ.), իր դայակ Սմբատի հետ միասին նախ հաստատվել էր Վան քաղաքից արևելք գտնվող Վարագ լեռան վրա, ապա՝ ապաստան գտել ինչ-որ բլրի լանջից բխող աղբյուրի մոտ՝ «ի կարկառս հովտաձեւս, հանդէպ հարաւոյ քաղաքաբերդին Վանի, մօտ յայն տեղի, յորում բղխէ աղբիւրաբար առ ստորոտով բլրակի միոյ, մօտ յեզր ծովուն»:[1] Թագավոր դառնալուց հետո Արտաշեսը որոշում է շենացնել այդ տարածքը և «դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերքն անտառախիտ ծառովք եւ գիներեր որթովք եւ զանազան պտղովք, զշէնս պատրաստեալ… Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց. քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով»:[2]

Քաղաքը կառուցվում էր և կարիք էր զգում անվանակոչության: Ըստ Թովմա Արծրունու. «Իսկ զանուն քաղաքին կոչեցին *Արտամատ*՝ որ թարգմանեալ ստուգաբանի *Արտաշէսի ձեռակերտ,* կամ թէ՝ *Արտաշէսի եկք.* զի ըստ պարսիկ ձայնի՝ *մատ՝ եկք* թարգմանի»:[3] Ինչպես տեսնում ենք, Արծրունի պատմիչը *Արտամետ* տեղանվան երկու տարբեր ստուգաբանություններ է բերում: Դրանցից երկրորդում պարզորոշ զգացվում է Մովսես Խորենացու շունչը, որն էլ ստիպել է Թովմա Արծրունուն անգամ ձևափոխել *Արտամետ*-ը *Արտամատ*-ի: Մովսես Խորենացին Արշարունիքի Մարմետ բնակավայրի (Երվանդակերտի) անունը առնչելով Երվանդ-Արտաշես հակամարտության պատմությանը, նրա *Մարմետ* անվան առաջացումը բացատրում է հետևյալ կերպ: Իր բանակով Երվանդակերտի մատույցներն հասած Արտաշեսը «միաբան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատ», որ թարգմանի *Մարս եկն*… Յայս ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն *Մարմէտ*»:[4] *Արտամետ//Արտամատ*-ի ստուգաբանություններից առաջինը՝ «Արտաշէսի ձեռակերտ»-ը լինելու է տեղականը՝ ժողովրդական ավանդազրույցից եկողը: Վերջինիս անդրադառնալուց առաջ տեսնենք, թե Վասպուրականի պատմիչը էլ ինչ շինություններ է վերագրում Արտաշեսին: Ըստ նրա, Հայոց թագավորը նաև ջրանցք է կառուցել, որը վերոհիշյալ աղբյուրի մոտից ջուր պետք է մատակարարեր քաղաքին և շրջակայքին, իսկ մինչ այդ «ի վերայ բղխեալ աղբիւրն, դարձեալ պարսպէ զքարաբլուրն ի պահպանութիւն ջրոյն ամրագունիւք շինուածովք»,[5] այսինքն՝ ամբարտակով ջրամբար է կառուցել:

Պարզվում է, որ Վան քաղաքից հարավ ընկած այս նույն շրջանում շինարարական նույնպիսի աշխատանքներ իրականացրել է Ուրարտուի Իշպուինի արքան (մ.թ.ա. 825-810թթ.): Վան քաղաքից 7կմ հարավ-արևելք գտնվող Ծվաստան գյուղից հայտնաբերված սյուների բեկորների վրա կարդացվում է հետևյալը. Išpuiniše

---

[1] *Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա), Եր., 1985, Ա, Է:*
[2] *Նույն տեղում, Ա, Ը:*
[3] *Նույնը:*
[4] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմութիւն (այսուհետև՝ Մ. Խորենացի), Եր., 1981, Բ, Խզ:*
[5] *Թ ո վ մ ա, Ա, Ը:*

Sardurihiniše ini BITU zaduni «Իշպուինի Սարդուրորդին այս տունը կառուցեց»:[6] Իսկ «Արտամետու կից են գրեթե Կոնկու վանք, Կենդանյաց գեղ, Ծվստան գեղ»:[7] Նույն Ծվաստանից հայտնաբերված մեկ ուրիշ արձանագրության մեջ նշվում է, որ Իշպուինի արքան Ախիունի քաղաքին մերձ աղբյուրի մոտից այստեղով ջրանցք է անցկացրել:[8] Այս քաղաքի անունը հիշատակված է նաև Իշպուինիի հաջորդ Մենուա թագավորի (մ. թ.ա. 810-786թթ.) Աղթամարի (այնտեղ տարված) արձանագրության մեջ:[9]Ախիունի քաղաքն ու նրա մարզը տեղադրում են կամ Վանա լճի հարավային, կամ հարավ-արևելյան ափերի մոտ:[10] Հավանականը վերջինն է՝ Արտամետն ու նրա շրջանը ներառյալ: Մեր կարծիքով, այս դեպքում Իշպուինիի արձանագրությունները խոսում են այն նույն շինարարական գործունեության մասին, որը ևս ժողովրդական ավանդազրույցների հետևությամբ Արծրունյաց տան պատմիչը վերագրում է Արտաշես արքային:

Իսկ ինչո՞ւ է այդ գործունեությունը վերագրվել հենց Արտաշեսին, երբ նա, անկասկած, ունեցել է իր հեռավոր նախորդը՝ մ.թ.ա. IX դ. ուրարտական արքան: Պատճառներից առաջինը լինելու է այն, որ Արտաշես I-ը ևս այս շրջանում շինարարական աշխատանքներ էր ծավալել: Հայտնի է նրա քաղաքաշինական եռանդուն գործունեության արգասիք այնպիսի քաղաքների գոյությունը, ինչպիսիք էին Արտաշատը, Զարեհավանները, Զարիշատները և այլն: Իսկ որ, իսկապես, նա այստեղ ևս լուրջ շինարարական աշխատանքներ է կատարել, վկայում է Արտամետի պաշտոնական *Արտաշիսեան* անվանումը՝[11] հետագայում մնացած շրջակա գավառի վրա:[12] Պատճառներից երկրորդը լինելու էր *Արտամետ* և *Արտաշես* անունների առաջին բաղադրիչների ակնհայտ հնչյունական նմանությունը, որը բավարար «փաստարկ» կարող էր ծառայել ժողովրդական ստուգաբանությամբ այդ երկու անունները միմյանց աղերսակցելու համար: Իշպուինիի հիմնադրած քաղաքի Արտաշեսին վերագրելու երրորդ պատճառը կարող էր լինել այն, որ ժողովուրդը Հայոց թագավորների (նրա համար Իշպուինին ևս Հայոց թագավոր էր) մեծագործությունները նախ և առաջ վերագրում էր Արտաշեսին, որի անունը մի տեսակ համարժեք էր դարձել «սիրված թագավոր» հասկացության: Օրինակ, Տրդատ I-ը (54-80թթ.) ևս ժողովրդին հայտնի է եղել *Արտաշես* անունով: Հ. Մանանդյանի կարծիքով սա, «եղել է, հավանորեն, Հայաստանի թագավորների տիտղոսը, ինչպես Արշակը պարթևների և Կեսարը հռոմայեցիների մոտ»:[13]

Արտամետում և նրա շրջակայքում Իշպուինիի ծավալած շինարարական գործունեության Արտաշես I-ին վերագրելու պատճառներից մեկն էլ գալու էր պաշտամունքային ոլորտից: Ի տարբերություն Մեծ Հայքի Երվանդունի թագավորների, որոնց կրոնական քաղաքականությունը խարսխվում էր Ամպրոպի աստծու և զուգակից Մայր դիցուհու պաշտամունքի վրա,Իշպուինիի կառուցած Արտամետում, ինչպես կտեսնենք ստորև, առաջնային համարվել է Արևաստծու և զուգակից դիցուհու պաշտամունքը: Նույն պաշտամունքը առաջնային է եղել նաև Արտաշես I-ի համար: Որ Երվանդունի թագավորների համար առաջնայինը ոչ թե Արևաստծու, այլ ամպրոպային Շանթառաք աստծու պաշտամունքն է եղել, ցույց է տալիս ինչպես նրանց կրած *Երուանդ* գահանունը[14] և Շանթառաք աստծու նման Երվանդ Վերջինին վերագրված հայացքով որ-

---

[6] *Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 149:*

[7] *Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Եր., 1978, էջ 386:*

[8] *Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, № 1.*

[9] *Նույնը:*

[10] *Н. Арутюнян, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 261; Նույնի՝ Биайнили (Урарту), Ер. 1970, стр. 355-356.*

[11] *Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 1963, էջ 41:*

[12] *Նույն տեղում, էջ 109:*

[13] *Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.1, Եր.,1944, էջ 353:*

[14] *Ս. Պետրոսյան, «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, թիվ 4, էջ 81-87: Նույնի՝ Հայոց երեք արքայազունների հասարակական ֆունկցիաների մասին,ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», 3, Գյումրի, 2000, էջ 59-64:*

ձաքարեր ճեղքելու հավատալիքը,[15] այնպես էլ այն հանգամանքը, որ նա երդվում էր Արամազդով (ամպրոպային Շանթառաք աստված) և Արտեմիդով (Արտեմիս//Անահիտ):[16] Իսկ որ նրա հակառակորդ Արտաշես I-ը արևապաշտ է եղել, ցույց է տալիս նրա անունով կոչված «արտաշիսյան թագի» գլխավոր զարդաքանդակը: Օրինակ, Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) թագի կենտրոնում Արևի խորհրդանշանն է, իսկ Արևի երկու կողմերին գլուխները դեպի խորհրդանշանը, մարմինները դեպի դուրս պատկերված երկու թռչունները Արուսյակ (Վեներա) մոլորակի երկու դրսևորումներն են՝ Արուսյակը որպես Լուսաբեր և որպես Գիշերավար:[17]

Ինչպես կտեսնենք ստորև, արևապաշտությունից են գալիս Արտամետի և այստեղ կառուցված Զարդ ամրոցի անունները: Ըստ Թովմա Արծրունու, Արտաշեսը երբ «զամրոցն պատրաստեաց, կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն՝ պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն»:[18] Նախադասության երկրորդ կեսը ուղեցույց կարող է ծառայել ամրոցի կապը քաղաքի և նրա անվանադիր աստծու հետ բացահայտելու, ինչպես նաև *Արտամետ* տեղանունը ստուգաբանելու ճանապարհին: Ամրոցի անունը նույնական է *զարդ* (<զ-արդ) բառի հետ, որը հնում նշանակում էր նաև «զամենայն զարդ երկնից»:[19] Անանիա Շիրակացին «Յաղագս երկնային զարդուց» վերնագրի տակ ներկայացնում է թե՛ երկնային համաստեղությունները, թե՛ անզեն աչքով տեսանելի հինգ մոլորակներն ու Լուսինը, թե՛, որը և այս դեպքում ամենակարևորն է՝ Արեգակը:[20] Պարզ է, որ *զարդ* բառը նա գործածում է «լուսատու» նշանակությամբ, իսկ լուսատուների մեջ ամենահզորը ցերեկային լուսատուն է՝ Արևը, որին էլ նախ և առաջ վերաբերելու է *զարդ* բառը: *Զարդ* բառի և ամրոցի անվան այս նշանակությունն էլ ի նկատի առնելով շարունակենք մեր քննարկումը:

Արտամետ-ի **մետ*-ի դեպքում հմմտ. *Մարմետ* տեղանունը և գետանունը Վան քաղաքից հյուսիս[21] և *Մարմէտ* տեղանունը Արշարունիքում:[22] Այս **մետ//մէտ* բառը, մեր կարծիքով, արմատակիցն է հայերեն *մոյթ* «նեցուկ, ցից», «հին հնդկերեն» mēthí «մույթ, նեցուկ, սյուն» և թրակերեն midne «գյուղ, շեն» բառերի, որոնք բխեցվում են հ.-ե.*mei- արմատից՝ -dh,-d,-t ածականներով: Նրա համար կարելի է վերականգնել *mei-d- նախաձևը՝ որպես զուգահեռ թրակերեն բառի վերականգնվող *mei-t(h)- «բնակատեղի» նախաձևի:[23] Այս դեպքում, *Արտամետ և Զարդ* տեղանունները, իրենց նշանակություններով գրեթե համընկնում են: Դրանք հասկացվելու էին որպես «Արտ (աստծու) բնակատեղի», «Արտ (աստծու) կացարան»:

Մեր կարծիքով, այս տեղանուններում առկա *Արտ-արդ* բաղադրիչը եղել է Արևի աստծու մակդիրը՝ թաբուի պատճառով փոխարինած նրա բուն անվանը: Այս բառը պահպանված է նաև *արտախոյր* բառաբարդի մեջ: «Թագավորական թագ» նշանակող և բազմաթիվ ուսումնասիրություններում քննարկման առարկա դարձած այս բառի վերաբերյալ Հ. Աճառյանի արած վերջնական եզրակացությունն այս է՝ «Բարդված է *արտ+խոյր* բառերից..., բայց ի՞նչ է *արտ*-»:[24] Կարծում ենք, որ այս հարցում մեզ կարող է օգնել Արտաշիսյան արքաների թագը, որի գլխավոր զարդաքանդակը ճառագայթող արևի խորհրդանշանն է:[25] Ըստ այսմ, *արտախոյր*-ը «թագավորական թագ»

---

[15] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Բ, խբ:*
[16] *Թ ո վ մ ա, Ա, Է:*
[17] *Ս.Պ ե տ ր ո ս յ ա ն, Գյումրիի պեղածո գոտու բեկորի զարդանախշերի շուրջ, ՇՊՄԺ հանրապետական առաջին գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 30-32:*
[18] *Թ ո վ մ ա, Ա, Ը:*
[19] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև ՆՀԲ), հ.1, Եր., 1979, էջ 718:*
[20] *Ա. Շ ի ր ա կ ա ց ի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Եր., 1940, էջ 19-31:*
[21] *Գ.Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 315, 398:*
[22] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Բ, խզ: Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 228:*
[23] *Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 180, 240: Նույնի՝ Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 61, ծան., 45:*
[24] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերենի արմատական բառարան, հ. 1, 1971, էջ 339-340:*
[25] *Խ. Մ ու շ ե ղ յ ա ն, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Եր., 1983, էջ 45. 50, 56, 57:*

ընդհանրական իմաստը պարունակելով հանդերձ, պետք է, որ նախապես վերաբերեր «արտաշիսյան թագին» և նշանակեր «արևային թագ»: Համեմատության համար նկատենք, որ Կոմագենեի Անտիոքոս Երվանդունի արքան (մ.թ.ա. 69-34թթ.) Նեմրութ լեռան բարձրաքանդակներից մեկում նույնպես պատկերված է հայկական (Արտաշիսյանների թագի նման) թագով, բայց «արտաշիսյան թագի» արևի ու զույգ թռչունների պատկերների փոխարեն նրա թագը նույն տեղում առյուծի պատկեր ունի: Ըստ այսմ, *աարդ/արտ*-ը կարելի է ծագած համարել հ.-ե. *ṛ-> հայերեն **արտ* արմատից և դիտել տարբերակը *արթ* (որից *արթուն*) բառի: *Արթուն* բառի ծագման վերաբերյալ Հ. Աճառյանը գրում է. «Քանի որ հնխ. pṛth- արմատը տալիս է արդեն *հարթ-նում, հարթ-չիկ* բայը, ուստի լավագույնն է բաժանել նրանից *արթ-ուն* և դնել *ար* (*յառնեմ, արի*) «վեր կենալ» արմատից՝ *թ* աճականով...»:[26] Այս դեպքում հայերեն *արթ*-ը, ուրեմն՝ նաև *Արտ/արդ*-ը, ազգակիցն է դառնում այնպիսի բառերի, ինչպիսիք են հին հնդկ. úd ārta «հարյավ», հուն. ωρτο «հարյավ», ὀρθρος «արևածագ», լատին. orior «հառնեմ», ortus «արևածագ, արևելք» բառերը:[27]

Հայերեն *արթ//արտ//արդ* արմատն ենք մենք տեսնում նաև ուրարտական Արևի աստված Շիվինիի հետ սերտորեն կապված սրբությունների՝ Արտուվարասիների (եզ. թվով ^{D}Arṭuuarasi, հոգն. թվով ^{D}Arṭuuarasaue)[28] անվան մեջ: Արևային Շիվինիի հետ նրանց կապն ապացուցելով, Ս. Հմայակյանը Արտուվարասիներ//«Շիվինիի զորքեր» հասկացությունը զուգադրում է հայ առասպելաբանությունից հայտնի «Արևի աստծու թիկնազորի» հետ:[29]

Արտուվարասի բառի *վարասի* բաղադրիչը այդ անունը կրողների՝ որպես «թիկնազորի» բացահայտիչն է: XIX դարավերջի վանեցին հատկյալ պատկերացումն ուներ դրա «մարտիկների» և նրանց գործառույթների վերաբերյալ: «Վարագա սարեն կ'երևա արշալույսեն առաջ հարևելս արևուն ծագումն. ահագին լերան մը տակեն կ'ելլեն 12 *ղավազներ*, սև սև արաբներ, և այդ լերան վրա լուսեղեն ճպոքներով ճառագայթի պես կը զարնեն. լեռը կը ցածնա. ամեն սարերը իրենց գլուխը կը խոնարհեն... հանկարծ արևու ոսկի գլուխն ու հրեղեն բրչամն կ'երևա»:[30] Գ. Արվանձտյանցի կողմից ընդգծված *ղավազ*-ը ծագումով արաբերեն բառ է (قواس, ղավաս) և նշանակում է «նետաձիգ»: Թե այս բառը հին հայերեն ինչ բառի է փոխարինել, դժվար է ասել: Այսուհանդերձ, մենք հակված ենք Արտուվարասիների անվան **վարասի* բաղադրիչի մեջ տեսնելու նույն նշանակությունն ունեցած մի բառ: Արևի ղավազների «լուսեղեն ճպոքները» նրանց նետերն էին լինելու: Արևային բնույթի աստվածները նաև աղեղնավոր-նետաձիգներ էին: Հիշենք մեր խայտակն և քաջագանգուր աղեղնավոր Հայկին՝ չար-խավար ուժերի անձնավորում Բելին նետահարողին, հիշենք Շիվինիի հերարձակ պատկերները ուրարտական արվեստի գործերում՝ նետ ու աղեղը ձեռքին, հիշենք նաև ոսկեգիսակ աղեղնավոր Ապոլոնին և այլն: Կարծում ենք, որ **վարասի*-ն հենց «նետաձիգ» է նշանակում և իր հիմքում ունի հայերեն **վարս* արմատը: Այս արմատն է առկա հայերեն *վարսամ* (<վարս-ամ) «գավազան, բիր, ցից», *վարսել* (<վարս-ել) և *վարսաւորել* (<վարս-աւոր-ել) բառերում: Վերջիններս նշանակում են «գետին գամել, հողի մեջ մխել» և առաջինի նման ընդունելի ստուգաբանություններ չունեն:[31] Բայց դժվար չէ կռահելը, որ դրանք առնչվում են նաև «նետ» և «նետահարել» հասկացություններին: Հիշենք, թե ինչպես է Հայկը սպանել Բելին. «Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին, եւ շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ *յերկիր հարստի սլաքն*»:[32]

---

[26] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 1, էջ 314:*
[27] *Նույն տեղում, հ. 3, Եր., 1977, էջ 384-385:*
[28] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 29:*
[29] *Նույնը:*
[30] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 77-78:*
[31] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, Եր., 1979, էջ 325:*
[32] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Ա, ժա:*

Արուսյակ մոլորակը՝ երկնակամարի ամենապայծառ լուսատուներից մեկը, աղավնու հետ միասին, եղել է ջրային տարերքի անձնավորում հեթանոսական Աստղիկ դիցուհու և նույնատիպ առաջավորասիական այլ դիցուհիների խորհրդանիշը:[33] Նա պաշտվել է նաև Արտամետում, որը պարզվում է Թովմա Արծրունու կողմից դարձյալ Արտաշեսին վերագրված հետևյալ հաղորդումից: Քաղաքը կառուցելու ընթացքում Հայոց արքան «ի մէջ երեքարմատեան գոգաձեւ հովտին փոքու՝ որ յերից բլրոցն խոնարհի, շինէ աշտարակ բարձրաբերձ փորուածոյ միջոցաւ, եւ ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, եւ մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոոցն, կարգէ եւ յօրինէ ի նմա փողոցս վաճառոց ամենալիցն եւ բաւականս»:[34] Ինչպես տեսնում ենք, խոսքը տաճարային համալիրի մասին է, որի կենտրոնում գտնվել է Աստղիկ դիցուհու բարձրաշեն տաճարը՝ նրա կուռքի հետ միասին:

Հայտնի է, որ երկնակամարում տարբեր եղանակներին իր ունեցած հակադիր դիրքերի (արևածագից առաջ՝ արևելքում, իսկ մայրամուտից հետո՝ արևմուտքում) պատճառով Արուսյակը նախապես համարվել էր տարբեր լուսատուներ և, ըստ այդմ, կրել իրար անհարիր անուններ՝ *Լուսաբեր* (Լուս աստղ) և *Գիշերավար*: Մեր նախնիների կողմից ցուցաբերված այդպիսի մոտեցման հետևանքն են ոչ միայն այս անունները, այլև հայոց հին տոմարի համապատասխան օրանունների որոշակի հերթականությունը: Ամսի 7-րդ օրը կոչում էր *Աստղիկ* և նախորդում էր *Միհր* անունը կրող 8-րդ օրվան (Միհրը հեթանոս հայերի կրոնում արեգակնային հրե նյութն ու նրա ջերմությունն անձնավորող աստվածն էր), իսկ 30-րդ օրը, որը ամսի վերջին օրն էր, կոչվում էր *Գիշերավար* և հաջորդում էր 29-րդ օրվան՝ *Վարագին*[35] (*Վարագ* լեռնանվան հետ նույնական այս օրանունը տարբերակն է արեգակնային լույսի անձնավորում աստծու *Վահագն* անվան՝ նրա նման ծագած իրանական միևնույն նախաձևից): Ուրեմն, հին հայոց տոմարի օրանուններից մեկը՝ *Աստղիկը*, արտացոլում է Արուսյակի էությունը որպես արևածագի ավետաբերի, իսկ մյուսը՝ *Գիշերավարը*, արտացոլում է նրա էությունը որպես արևի երկնային ուղու վախճանը գուժողի: Կարծում ենք, որ նույնպիսի տարբերակում գոյություն է ունեցել նաև ուրարտական դարաշրջանում: Արուսյակի անձնավորում դիցուհու կերպարում նախկին երկու դիցուհիների կերպարների միահյուսված լինելու վկաները ուրարտական բրոնզե կաթսաների կես թռչուն-կես կին ներկայացնող կանթերն են: Բ.Պիոտրովսկին այդ կանթերը առնչելով արևի պաշտամունքին(դրանք մեջքերին կրում են արևը խորհրդանշող օղակներ), միևնույն ժամանակ համարում է Տուշպուեա դիցուհու խորհրդանիշները:[36] Կասկած լինել չի կարող, որ կես թռչուն-կես կին ներկայացնող այդ կանթերը նաև համարվել են դիցուհու խորհրդանիշ Արուսյակ մոլորակի մարմնավորումները, որովհետև նրանց մեջ կան նաև, որ կանացի մեկ գլխի փոխարեն (նկ.1) ունեն երկուսը (նկ.2): Իսկ այդպիսի դեպքերում հաշվի են առնվել թե՛ Լուսաբերը (առավոտյան Արուսյակը), թե՛ Գիշերավարը (երեկոյան Արուսյակը):

Հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում հաճախ ենք հանդիպում «Պղնձե քաղաքի» առասպելաբանական կերպարին: Այս դեպքում մեզ հետաքրքրում է «Սասնա ծռերի» մեջ հիշատակվող «Պղնձե քաղաքը՝ Խանդութի հայրենական քաղաքը», որը միայն նրան չէ, որ առնչվում է, որովհետև մեկ այլ պատումի համաձայն, «Պղնձե քաղաք Քառասուն ճող ծամ կար. էդ էլ թագավորի աղջիկ էր»:[37] Ընդ որում, Պղնձե քաղաքի թագավորի աղջկա բարձրաշեն պալատի տանիքին դրված էր

---

[33] *Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Եր., 1941, էջ 71, 74-78:*

[34] *Թովմա, Ա, ը:*

[35] *Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 78: Հ. Քաղալյան, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 100, 101, 104:*

[36] *Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, стр. 56-58; Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971, էջ 409:*

[37] *Սասնա ծռեր, հ. 2, մաս 1, Եր., 1944, էջ 81: Նույնը, մաս 2, Եր., 1951, էջ 242:*

լինում գիշերը ճրագի պես լույս տվող ոսկե խնձոր և ով «զարկե էն ոսկի խնձուր բիրի տակ, դնի ուր ծոց, /Թագավորի խիտ կռիվ անե, կտրիչ էլնի, /Աղջիկ կը տանի իրեն»:[38]



Նկ. 1



Նկ. 2

Կասկած լինել չի կարող, որ Պղնձե քաղաքի թագավորի աղջիկը վիպական զուգահեռն է Աստղիկի (և նմանատիպ դիցուհիների), նրա լուսատու ոսկե խնձորը՝ Արուսյակ մոլորակի, իսկ առասպելաբանական «Պղնձե քաղաքն» ինքը՝ հիշյալ դիցուհու սրբավայր-նստավայրի: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Վան քաղաքից ոչ հեռու,Վարագա դաշտում եղած ավերակ բնակավայրերից մեկը դեռևս XIXդ. վերջին կրում էր *Պղնձե քաղաք* անունը:[39] Այս «քաղաքի» անվան մեջ *պղինձ* (որից՝ *պղնձե*) բառի առկայությունը ևս խոսում է Աստղիկի և նույնատիպ դիցուհիների պաշտամունքին այդ «քաղաքի» առնչվելու մասին, որովհետև ժամանակին մետաղները ևս, շաբաթվա օրերի նման, ունեին իրենց առասպելաբանական հովանավոր աստվածությունները՝ խորհրդանշելով նրանց: Օրինակ, Արևի աստծու խորհրդանիշը ոսկին էր, Լուսնի աստծունը՝ արծաթը, իսկ Աստղիկի տիպի դիցուհիներինը (Ափրոդիտե, Վեներա և այլն) պղինձն էր:[40] Վարագա դաշտում գտնվող «Պղնձե քաղաք»-ից արևելք Վարագ լեռն էր՝ իր մի մասով կրած Աստղիկ անունը:[41] Եթե ամբողջ հայության համար «օրվա սկիզբն ավետում է Լույս աստղը, Լուսո աստղը, Վեներա մոլորակը, որը կոչվում է նաև Արուսյակ»,[42] ապա Վանի և իր շրջանի հայերի համար օրվա սկիզբը ուղղակի կապի մեջ էր դրված Վարագ լեռան և Լուսաբերի հետ: «Այնտեղի առավոտը՝ ոչ արևածագումն է և ոչ քաղաքակրթյալ տեղերու պես՝ արևածագումեն քանի մը ժամ ետքը. այլ՝ երբ Լուսո աստղն իր գլուխը կը բարձրացնե Վարագա Գալիլիայեն»:[43] Դրանցից որոշ

[38] *Սասնա ծռեր, հ. 1, Եր., 1936, էջ 149:*
[39] *Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 78: Սասնա ծռեր, հ. 1, մաս 2, էջ 866:*
[40] *Վ. Т о п о р о в, Металлы, Мифы народов мира, т. 2, М., 1988, стр. 147.*
[41] *Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 47-48:*
[42] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, հ. 7, Եր., 1975, էջ 37:*
[43] *Գ. Մ ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 1, էջ 126:*

ժամանակ անցնելուց հետո է, որ «Վարագա սարեն... հանկարծ արևու ոսկի գլուխն ու հրեղեն բրչամն կերևա»:[44]

Տարբեր ավանդույթներում Արուսյակն անձնավորած դիցուհիների պաշտամունքները միահյուսված էին Արևի աստվածների պաշտամունքներին: Հայ իրականության մեջ դրա լավագույն վկայություններն են Վահագնի և Աստղիկի պաշտամունքը Տարոնի Աշտիշատում[45] և Ծիվինիի ու Տուշպուեայի համատեղ պաշտամունքը Տուշպա//Վանում:[46] Ընդ որում, այս քաղաքը Արևի աստծու պաշտամունքի կարևոր կենտրոն է եղել Ուրարտուի մայրաքաղաքը դառնալուց շատ առաջ:[47] Այն նույնքան վաղ ժամանակներից լինելու էր նաև Արուսյակի անձնավորում դիցուհու պաշտամունքի նույնպիսի կենտրոն: Դրա մասին է խոսում *Տուշպա* և *Տուշպուեա* անունների անխզելի կապը:Դրա վկայություններն են նաև քաղաքի հիմնադրումը առասպելական (ո՛չ պատմական) Շամիրամին վերագրող ավանդազրույցները: Առասպելական Շամիրամը ժառանգորդն է Իշտար // Աստղիկ և նույնատիպ դիցուհիների,[48] ավելի ճիշտ նրանց՝ որպես երեկոյան Արուսյակի անձնավորում դիցուհիների (այստեղից էլ Շամիրամի կերպարի բացասական գծերը): Շամիրամի մասին ավանդազրույցները նրան առնչում են ոչ միայն Վանին, այլև Լեզքին և Արտամետին, այսինքն՝ Վանա լճի հարավ-արևելյան շրջանների բնակավայրերին:[49]Այս առիթով հիշենք նաև, որ Արտամետի մոտ Վանա լիճը թափվող նույնանուն գետակը կոչվում էր նաև Շամիրամագետ:[50]Այս միջավայրում է իր ստեղծման բուն պատճառը բացահայտում Ս. Հակոբի մասին այն ավանդազրույցը, որտեղ Արտամետի աղջիկները «անամաչ» և «անամոթ» են բնութագրվում: Բանն այն է, որ աղբյուրում լվացք անելիս, նրանք «ոչ պատկառեցան ի սրբոյն, եւ ոչ ծածկեցին զսրունս իւրեանց»:[51]

Ուրարտական դարաշրջանում (ավելի վաղ ևս) արդեն հստակ պատկերացում կար Լուսաբերի և Գիշերավարի միևնույն լուսատուն լինելու վերաբերյալ: Այսուհանդերձ, պաշտամունքային ոլորտում հազարամյակների ընթացքում արմատավորված պատկերացումները չէին կարող հեշտությամբ տեղի տալ և միևնույն լուսատուի երկու տարբեր անձնավորումները՝ պայմանավորված երկնակամարում նրա ունեցած տարբեր դիրքերով, շարունակում էր գոյատևել Արուսյակի անձնավորումը մեկ՝ ավելի բարձր կարգի, դիցուհի ըմբռնվելու կողքին: Անգամ հեթանոսական դարերում այդ պատկերացումը շարունակում էր գոյատևել (հմմտ. Արա Գեղեցիկի զուգակիցները՝ Նուարդ և Շամիրամ) և նույնիսկ թափանցել էր մեր միջնադարյան դյուցազնավեպ (հմմտ. Սասունցի Դավթի զուգակիցները՝ Խանդութ և Չմշկիկ): Նույն կերպ ուրարտական դարաշրջանում այդպիսի պատկերացումը շարունակելու էր գոյատևել Արուսյակի անձնավորում մեկ՝ ավելի բարձր կարգի, դիցուհու վերաբերյալ եղած պատկերացման կողքին: Միօրինակություն մտցնելու և պաշտամունքը կենտրոնացնելու համար կարիք է զգացվել մեկ՝ միավորիչ, անվան ընտրության: Քանի որ Տուշպա//Վանն էր դարձել պետության թե՛ հոգևոր կենտրոնը, թե՛ մայրաքաղաքը, բնականաբար, նախապատվությունը տրվելու էր նրա դիցուհուն, որը և իր ու պետության գլխավոր սրբավայրի անունով կոչվեց *Տուշպուեա* (հմմտ. *Տուսպ* և *Տուսպեայ*): Նման մոտեցում գոյություն ուներ նաև հայության ազգակից ժողովուրդների ավանդույթներում:

---

[44] *Գ. Մրվանձտյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 76-77:*

[45] *Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, Եր., 1983, ճԺԴ, 809:*

[46] *Г. Меликишвили, Наири – Урарту, тб., 1954, стр. 373.*

[47] *Ս. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 46:*

[48] *Մ. Սրեղյան, «Վիշապներ»..., էջ 78-79: С. Арутюнян, Шамирам, Мифы народов мира, т. 2, стр. 639.*

[49] *Գ. Մրվանձտյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 76: Ա.Ղանալանյան,Ավանդապատում, Եր., 1969, էջ 70-71: Մ. Սրեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ.Խորենացու հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 545-549:*

[50] *Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան,Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ.1,1986, էջ 491:*

[51] *Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 371-372:*

Ինչպես Արևի անձնավորում աստվածը (^{D}UTU,^{D}Šiuini), այնպես էլ Արուսյակի անձնավորում դիցուհին (^{D}Ištar, ^{D}Ţušpuea) համարվել են ուրարտական թագավորների դինաստիական աստվածությունները: Սարդուր I-ը (մ.թ.ա. 845-825թթ.) «արևային» *Սարդուրի* (<*sard-ur) անունը կրելով հանդերձ (համաձագում է լյուդիական Σάρδις դիցանվան հետ՝ նախնական «արև», «տարի» նշանակությամբ),[52] մեծապես պաշտել է նաև Արուսյակի անձնավորում դիցուհուն՝ «1988թ. հայտնաբերված մի սեպագրում Սարդուրի I-ինի անունից առաջ դրված է Իշթար դիցուհուն նշանակող գաղափարագիրը»:[53] Իսկ Շիվինիին նրա թոռ Մենուայի (մ.թ.ա. 810-786թթ.) ձոնած կոթողում,[54] ինչպես Ս. Հմայակյանն է նկատում. «Մինուան իր և իր որդու համար այդ աստծուց խնդրում է «կյանք, ուրախություն, մեծություն»: Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ Շիվինին եղել է նաև թագավորող հարստության հովանավոր աստվածություններից մեկը»:[55] Ուրեմն, բնական է, որ զույգ կազմած Արևի և Արուսյակի աստվածությունները պաշտելի հովանավորներ էին լինելու նաև Սարդուրի I-ի որդի և Մենուայի հայր Իշպուինիի համար: Իսկ քանի որ նրանց համատեղ պաշտամունքն իրականացվում էր ոչ միայն Տուշպա//Վանում, այլև Արտամետում, ապա հասկանալի է դառնում այն հոգածությունը, որով Իշպուինին շրջապատել էր Արտամետն ու նրա մարզը: Ուրեմն, տնտեսական նկատառումներից բացի, Իշպուինին պետք է աչքի առաջ ունեցած լիներ նաև կրոնական գործոնը, երբ շինարարական լայնածավալ աշխատանքներ էր ձեռնարկում Արևի աստծու և Արուսյակի անձնավորում դիցուհու համատեղ պաշտամունքի երկրորդ կարևոր վայրում՝ Արտամետում:

ДРЕВНИЕ БОЖЕСТВА АРТАМЕТА

___ *Резюме* ___ ___ *С. Петросян, Ц. Петросян* ___

По сообщению Т. Арцруни, юго-восточнее Вана царь Арташес построил город Артамет, крепость Зард, канал с водохранилищем и капище божества Астхик. В действительности, согласно урартским надписям, такие дела здесь совершил царь Ишпуини (825-810гг. д.н.э.), при котором древний Артамет был значительным центром культа божественной пары Арт (“Солнце, Бог солнца”) и Астхик (“планета Венера”, “Богиня этой планеты”). От имени этого солнечного бога происходит как топонимы *Артамет и Зард<*з-ард* (т.е. другое название Артамета), так и название ^{D}Arţuuarasaue (<*Arţu-uarasi), которое носили “стрелки-гвардейцы” Бога Солнца.

[52] *Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 49:*
[53] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 100, ծան. 96:*
[54] *Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи, № 95.*
[55] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 46:*